

22.004

195 100 2000
0 5 FEB 2

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԿ (Բ) Կ ԿԻ ԸԳԻՏԱԳՐՈՊ-ԲԱԺՆԻ

33(04)

2-24

Ա.Ա.

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ

(Յերեկոյան կուսխորհրդային դպրոցների յեկ առարկա-
յական խմբակների համար)

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1929



22.004

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր հասկացողություն արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների մասին: Արտադրության նյութական պրոցեսը և նրա հասարակական ձևը, վորպես հակադրությունների միացություն: Եկոնոմիկա և տեխնիկա: Հասարակական տնտեսությունը և նրա ձևերը—կազմակերպված և անկազմակերպ տնտեսություն: Քաղաքատնտեսությունը վորպես ապրանքային—կապիտալիստական տնտեսության արտադրական հարաբերությունների ծագման, զարգացման և անհետացման գիտություն: Քաղաքատնտեսությունը և խորհրդային տնտեսությունը: Ինչի համար ենք ուսումնասիրում քաղաքատնտեսությունը:

I ԹԵՄԱ

ԱՐԺԵՔԻ ԹՆՈՐԻԱ

1. Աշխատանքի տեխնիկական և հասարակական բաժանումը: Արտադրության հասարակական բնույթը և մասնավոր սեփականությունը: Փոխանակությունը վորպես արտադրողներին իրար կապելու մի ձև: Արդյունքի ապրանք դառնալը:

2. Ապրանք: Սպառողական արժեքը և արժեքը: Աշխատանքը վորպես արժեքի սուբստանցիա: Աշխատանքի յերկյակ բնույթը—վերացական աշխատանք, կոնկրետ աշխատանք: Վերացական աշխատանքը վորպես հասարակական աշխատանքի չուրահատուկ ձև՝ ապրանքային տնտեսության մեջ: Մասնավոր և հա-

Հրատ. № 1086

ՊԵՏՏՐԱՏԻ II ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Դրանագլ. № 2789 (բ.)

Պատվ. № 1048

Տիրաժ 1500

սարակական աշխատանք: Անհատական և հասարակական—անհրաժեշտ աշխատանք: Պարզ և բարդ աշխատանք: Հասարակական աշխատանքի արտադրողականությունը և արժեքը:

3. Արժեքի բովանդակությունը և ձևը: Արժեքի հարաբերական և համարժեքային (Эквивалентный) ձևովերը: Արժեքի ձևերի զարգացումը—պարզ, ծավալուն, բնականորեն և զրամական:

4. Ապրանքային ֆեոիշիզմի հասկացողությունը: Արտադրական հարաբերությունների առարկայացումը ապրանքա-կապիտալիստական տնտեսության մեջ: Արժեքը վորպես հասարակական հարաբերությունների արտահայտություն: Արժեքի կարգավորիչ դերն ապրանքային տնտեսության մեջ: Արժեքի կատեգորիայի պատմական բնույթը:

II ԹԵՄԱ

ՓՈՂԻ ԹԵՈՐԻԱ

Արժեքի զրամական ձևը: Փողային ֆեոիշիզմը վորպես ապրանքային ֆեոիշիզմի ուրույն տեսակը: Փողի ֆունկցիաները: Փողը վորպես արժեքի չափանիշ: Արժեք և գին: Գների մասշտաբը: Փողը վորպես շրջանառության միջոց: Շրջանառության համար անհրաժեշտ փողի քանակը: Թղթադրամի ծագումը: Փողը վորպես գանձ: Փողը վորպես վճարելամիջոց: Վարկադրամի առաջացումը: Համաշխարհային փողը:

III ԹԵՄԱ

ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր հասկացողություն հավելյալ արժեքի և կապիտալի մասին: Փողի՝ կապիտալ դառնալը: Շրջանառության պրոցեսից կապիտալիստական հատույթ

զոյացնելու անկարելիությունը: Բանվորական ուժը վորպես ապրանք. նրա՝ շուկայում չերևան գալու պայմանները: Բանվորական ուժի և աշխատանքի տարբերությունը: Բանվորական ուժի արժեքը և սպառողական արժեքը: Անհրաժեշտ աշխատանք և հավելյալ աշխատանք: Անհրաժեշտ արդյունք և հավելյալ արդյունք: Հավելյալ աշխատանքի՝ հավելյալ արժեք դառնալը վորպես կապիտալիստական արտադրական հարաբերությունների արգասիք:

Կապիտալի հասկացողությունը: Կապիտալը վորպես հասարակական-պատմական կատեգորիա: Մշտական կապիտալն ու փոփոխական կապիտալը և նրանց դերը հավելյալ արժեքի արտադրման մեջ: Արժեքի փոխադրությունն ու ստեղծումը: Բանվորական ուժի արժեքի վերարտադրությունը: Կապիտալիստական արտադրության պրոցեսսը վորպես աշխատանքի պրոցեսսի և արժեքի մեծացման պրոցեսսի միացություն: Հավելյալ արժեքի նորման: Կապիտալիստական շահագործման առանձնահատկությունները: Ընդհանուր հասկացողություն բացարձակ և հարաբերական հավելյալ արժեքների մասին: Բանվորական ուժի չերկարացումը: Աշխատանքի ինտենսիվության բարձրացումը: Բացարձակ հավելյալ արժեքի ազդեցությունը բանվոր դասակարգի դրության վրա: Հարաբերական հավելյալ արժեքի արտադրումը և տեխնիկայի զարգացումը: Կոոպերացիա: Մանուֆակտուրա: Գործարան: Կապիտալիստական տեխնիկայի զարգացման տեխնիկաները: Տեխնիկայի զարգացման ազդեցությունը բանվոր դասակարգի դրության վրա: Կապիտալիստական ռապիդնալացումը:

IV ԹԵՄԱ

ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

Աշխատավարձը վորպես բանվորական ուժի գնի և արժեքի փոխարկյալ ձևը: «Աշխատանքի» գինը վորպես բանվորական ուժի արժեքի իռացելունալ արտահայտություն: Աշխատավարձի տեսակները — ժամանակավարձ (новременная), գործավարձ (сдельная) և պարգևային (премиальная): Դրամավճար և բնարդյունավճար աշխատավարձ: անվանական և իրական աշխատավարձ: Արտաժամյա աշխատանք:

Տեյյորի սխտեմը: Աշխատավարձի հաշվարկման այլ յեղանակներ — շահույթներին մասնակցելու սխտեմը և սահուն ցուցնակի (соль зная скала) սխտեմը: Ազգային տարբերություններ աշխատավարձի նըկատմամբ: Պաշար՝ աշխատավարձի բարձրացման համար: Պրոֆմիությունների դերը: Աշխատավարձի այսպես կոչված «յերկաթյա որենքի» քննադատությունը:

V ԹԵՄԱ

ԿԱՊԻՏԱԼԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼԻ ԿՈՒՏԱԿՈՒՄ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՏԱԿՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՐԵՆՔԸ

1. Պարզ վերարտադրություն: Ի՞նչ և վերարտադրությունը և ինչ տարբերություն ունի արտադրությունից: Մշտական և փոփոխական կապիտալների վերարտադրությունը: Կապիտալիստական հարաբերությունների վերարտադրությունը:

2. Ընդլայնված վերարտադրություն: Հավելյալ արժեքի՝ կապիտալ դառնալը: Կապիտալիստական հա-

րաբերությունների ընդլայնված վերարտադրություն: Թե ինչպես են ապրանքային արտադրություն սեփականական որենքները վերածվում կապիտալիստական յուրացման որենքների: Կուտակման անխուսափելիությունը: Կուտակումը վորոշող ֆակտորները:

3. Կապիտալիստական կուտակման ընդհանուր որենքը: Կապիտալի որգանական կազմությունը: Կապիտալի չփոփոխվող կազմության պայմաններում կատարվող կուտակումը: Կուտակումը և կապիտալի որգանական կազմի փոփոխումը: Համակենտրոնացում և կենտրոնացում: Գործազուրկների պահեստի բանակը և այդ բանակի ձևերը: Պահեստի բանակի անխուսափելիությունն ու անհրաժեշտությունը արտադրության կապիտալիստական յեղանակի համար: Պահեստի բանակի ազդեցությունն աշխատավարձի վրա: Աշխատավարձի հիմնական տենդենցը: Բանվոր դասակարգի բացարձակ աղքատացման տենդենցը: Ազգաբնակչության կապիտալիստական որենքը: Կապիտալի այսպես կոչված սկզբնական կուտակումը:

VI ԹԵՄԱ

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՆԻ ՅԵՎ ՎԱՍՏԱԿԻ ԹԵՈՐԻԱՆ

Կապիտալի շրջանապտույտը: Կապիտալի շրջանապտույտի յերեք ձևերը — փողային, արտադրողական և ապրանքային: Արդյունաբերական կապիտալի հասկացողությունը: Ընդհանուր հասկացողություն վաստակի՝ իբրև հավելյալ արժեքի փոխարկյալ ձևի մասին: Վաստակի անհատական և հասարակական նորմաները: Կապիտալի որգանական կազմը և նրա ազդեցությունը վաստակի նորմաների վրա: Կապիտալի շրջա-

նառության ազդեցութիւնը վաստակի նորմաների վրա: Կապիտալի տարբեր մասերի շրջանառութիւնը: Հիմնական կապիտալ և շրջանառու կապիտալ:

Վաստակի նորմայի և շահագործման նորմայի փոխհարաբերութիւնները: Միջին Վաստակի ձգտումը և կապիտալների տեղափոխումը: Վաստակի միջին նորմա կազմելու տենդենցը: Վաստակի միջին նորման և նրա իջման տենդենցը: Վաստակի նորման և հավելյալ արժեքի վերաբաշխումը: Արտադրութեան գինը վորպես արժեքի փոխարկյալ ձև: Արժեքը վորպես կապիտալիստական արտադրութեան ռեգուլատոր՝ արտադրութեան գների ձևի տակ: «Կապիտալ»-ի առաջին և յերկրորդ հատորների միջև յենթադրվող կարծեցյալ հակասութիւնը:

VII ԹԵՄԱ

ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ՅԵՎ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿ

Ապրանքային կապիտալի՝ առևտրական կապիտալ զառնալը: Արտադրութեան և շրջանառութեան պերիոդները կապիտալի շրջանապտուցում: Շրջանառութեան ծախսերը ի տարբերումն արտադրութեան ծախսերից: Արտադրութեան պրոցեսի շարունակումն շրջանառութեան մեջ: Ապրանքների շրջանառութիւնը և լրացուցիչ կապիտալի անհրաժեշտութիւնը շրջանառութեան սփերայի սպասարկման համար: Առևտրական կապիտալի անջատումը և արևտրական վաստակը: Առևտրական կապիտալի դերը նորմայի հավասարեցման մեջ: Առևտրական վաստակի բարձրութիւնը: Հավելյալ արժեք չստեղծող առևտրական ծառայողների աշխատանքը: Արտադրողական և անարտադրողական աշ-

խատանքը կապիտալիստական տնտեսութեան մեջ: Առևտրական ծառայողների շահագործումը:

VIII ԹԵՄԱ

ՓՈԽԱՏՎԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ՅԵՎ ՎԱՐԿ՝ ՎԱՐԿԱ-ԴՐԱՍ ՅԵՎ ԹՂԹԱՂՐԱՍ

1. Փոխառակական կապիտալ և փոխառվական տոկոս: Կապիտալը վորպես ֆունկցիա և կապիտալը վորպես սեփականութիւն: Պարապ վեր ընկած կապիտալի գոյացումը: Փոխառվական տոկոսի մակարդակը: Վաշխառական կապիտալ: Ձեռնարկատիրոջ հասուցթի բնութանումը փոխառվական տոկոսից:

2. Վարկը և բանկերը: Վաճառականական և բանկիրային վարկ: Մուրհակը վորպես պարտագիր: Մուրհակագեղչութիւն և գեղջման տոկոս: Ընդհանուր հասկացողութիւն բանկերի մասին: Բանկերի պասսիվ և ակտիվ գործառնութիւնները: Բանկային վաստակը:

3. Վարկադրամ և թղթադրամ: Ընդհանուր հասկացողութիւն վարկադրամի մասին: Ի՞նչ չափով մուրհակները կարող են ամբողջութեամբ փոխարինել փողին: Թղթադրամը և նրա զանազանութիւնը վարկադրամից: Թղթադրամի գնողական ուժը: Ինֆլացիան և նրա ազդեցութիւնը ժողովրդական տնտեսութեան վրա: Նորմալ դրամական շրջանառութեան վերականգնումն պայմաններն ու միջոցները: Միջազգային հաշվհարդարներ:

IX ԹԵՄԱ

ՇՈՂԱՅԻՆ ՌԵՆՏԱ

1. Ընդհանուր հասկացողութիւն հողային ռենտայի մասին: Դիֆֆերենցիալ ռենտա՝ առաջին, նրա գոյացման պայմանները և տարբերութիւնը արդյու-

նաբերական գերվաստակից: Նվազող պտղաբերության օրենքը և նրա քննադատութիւնը: Դիֆֆերենցիալ ռենտա՝ յերկրորդ: Հավելյալ արժեքը վորպես դիֆֆերենցիալ ռինտալի աղբյուր: Բացարձակ ռենտա: Բացարձակ ռենտալի աղբյուրը: Բացարձակ ռենտան և գյուղատնտեսական՝ մթերքի գինը: Մենաշնորհալին ռենտա: Հողի գինը: Հողալին ռենտալի աճման տենդենցը՝ կապիտալիզմի զարգացման համեմատ: Հողալին ռենտալի սոցիալական նշանակութիւնը: Հողի և ռենտալի ազդայնացումը:

2. Ռենտալի մինչ-կապիտալիստական տեսակները և ռենտալի հարցը մանր գյուղացիական տնտեսութեան մեջ: Ռենտալի մինչ-կապիտալիստական տեսակները—աշխատավճար ռենտա, արդյուրավճար ռենտա և դրամական ռենտա: Դիֆֆերենցիալ ռենտան և մանր գյուղացիական տնտեսութիւնը: Բացարձակ ռենտան և մանր գյուղացիական տնտեսութիւնը:

3. Մանր արտադրութիւնը կապիտալիզմի սիւսեմում: Պոչոր արտադրութեան առավելութիւնները մանր արտադրութեան համեմատութեամբ: Մանր արտադրութեան վտարումը: Մանր արտադրողի շահագործումը շրջանառութեան և վարկի բնագավառում: Մանր արտադրութիւնը հողագործութեան մեջ: Նրա հարաբերական կենսունակութեան պատճառները: Գյուղատնտեսութեան կապիտալիստական զարգացման առանձնահատկութիւնները: Գյուղացիութեան շիրտավորումը կապիտալիզմի ժամանակ: Մանր արտադրողների կոոպերացիան բուրժուական հասարակութեան մեջ և նրա կապիտալիստական վերասերումը:

X ԹԵՄԱ

ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՃԳՆԱԺԱՍԵՐ

1. Վերարտադրութեան պրոցեսը և արդունքների իրացումը: Շուկաների շղթայանման կապը: Կապիտալիստական տնտեսութեան հավասարակշռութեան պայմանները պարզ վերարտադրութեան ժամանակ: Կապիտալիստական տնտեսութեան հավասարակշռութեան պայմանները ընդլայնված վերարտադրութեան ժամանակ: Ընդլայնված վերարտադրութեան սխեման:

2. Կապիտալիստական արտադրութեան անարխիան: Ի՞նչ բան է գերարտադրութիւնը: Կապիտալիզմի հակասութիւնները և ճգնաժամերի անխուսափելիութիւնը: Ճգնաժամի նկարագրութիւնը: Արտադրութեան տարբեր ճյուղերի միջև գոյութիւն ունեցող տնտեսական հավասարակշռութեան խախտումը վորպես հետևանք այն հակասութեանը, վորը կա արտադրութեան անսահման ընդլայնման տենդենցի և մասսաների սահմանափակ սպառման միջև (ընդհանուր գերարտադրութիւն): Ճգնաժամերի պարբերականութեան պատճառը: Ճգնաժամերի հետևանքները: Ճգնաժամերի ազդեցութիւնը բանվոր դասակարգի դրութեան վրա: Վոչ-կապիտալիստական միջավայրի նշանակութիւնը կապիտալի ընդլայնված վերարտադրութեան համար: Ռոզա Լյուքսեմբուրգի իրացման և ճգնաժամերի թեորիայի քննադատութիւնը:

XI ԹԵՄԱ

Իմպերիալիզմ

1. Կապիտալի մոբիլիզացիան: Համակենտրոնացման և կենտրոնացման պրոցեսների ուժեղացումը: Զեռնարկութիւնների ակցիոներական ձևը: Ակցիոնի-

րական ձևի զարգացման պատճառները և նշանակութ-
յունը: Ակցիա: Վաստակ և դիվիդենդ: Ակցիաների
գինը: Իրական և ֆիկտիվ կապիտալ: Հիմնադրային
(учредительская) շահույթ: Ակցիոներական ձևը վոր-
պես կապիտալի համակենտրոնացման և կենտրոնաց-
ման գործոն: Ակցիոներական ձևը և կապիտալի «գե-
մոկրատականացումը»:

2. Կապիտալիստների մոնոպոլիստական միավոր-
ությունները — կարտելներ, սինդիկատներ, տրեստ-
ներ: Հորիզոնական, ուղղահայաց և համակից (комби-
нированный) ձեռնարկություններ: Մոնոպոլ գինը:

3. Ֆինանսական կապիտալ: Բանկերի նոր դերը
մոնոպոլիստական կապիտալիզմի զարաշխանում:
Բանկային գործի համակենտրոնացումն ու մոնոպոլի-
զացիան: Արդյունաբերական և վարկային կապիտալի-
զմի միաձուլումը: Բանկային կոնցերներ: Ֆինանսա-
վորման ընկերություններ: Արդյունաբերական կոն-
ցերներ: Բանկերի կոնսորցիումները: Ֆինանսական
կապիտալիզմ: Նրա մոնոպոլիստական բնույթը: Տըն-
տեսական կազմակերպությունների միաձուլումը պե-
տական ապպարատի հետ:

4. Համաշխարհային տնտեսությունը և իմպե-
րիալիզմը: Կապիտալիզմի գերաճումն ազգային տնտե-
սություն շրջանակներից դուրս: Աշխատանքի համաշ-
խարհային բաժանումը: Ապրանքների համաշխարհա-
յին շարժումը: Բանվորական ույժի գաղթը: Համաշ-
խարհային տնտեսության զարգացման ազգային և
միջազգային տենդենցները:

Նորագույն պրոտեկցիոնիզմը: Պայքար՝ վաճա-
ռահանման, շուկաներ և հումուլթի աղբյուրներ ձեռք
բերելու համար. գաղութները և կիսագաղութները: Պայ-
քար կապիտալի արտահանման համար: Աշխարհի

տնտեսական և քաղաքական բաժանումը: Իմպերիա-
լիզմը վորպես կապիտալիզմի զարգացման ուղույն մի
աստիճան: Կապիտալիստական զարգացման անհա-
վասարաչափության որոնքը և նրա դրսևորման ա-
ռանձնահատկությունները իմպերիալիզմի զարաշխա-
նում: Աշխարհի վերաբաժանման կռիվի անխուսափե-
լիությունը: Սաղաղության հաստատուն համաձայնու-
թյունների անկարելիությունը: Միլիտարիզմ և ժարի-
նիզմ: Պատերազմների անխուսափելիությունը: Կապի-
տալիզմի փթումը: Ուլտրա-իմպերիալիզմի կառուցկիա-
կան թեորիայի ոպորտունիստական բնույթը:

5. Հետ-պատերազմյան կապիտալիզմը: Պատե-
րազմը և համաշխարհային տնտեսությունը: Պատե-
րազմական ավերածությունների հանրագումարները:
Վերսալի դաշնագիրը: Կապիտալիզմի հետ-պատերազ-
մյան ճգնաժամը: Համաշխարհային կապիտալիզմի
ծանրություն կենտրոնի տեղափոխումն Ամերիկա:
Գաղութների արդյունաբերական զարգացումը: Հետ-
պատերազմյան կապիտալիզմի հակասությունների
հիմնական հանգույցները: «Կապիտալիզմի կայունաց-
ման» առանձնահատկությունները և հակասու-
թյունները: Առանձին յերկրների զարգացման անհավասա-
րաչափությունը: Շուկաների պրոբլեմը: Կապիտալիս-
տական սխտեմի հակասությունները և նրա կրախի
անխուսափելիությունը:

XII ԹԵՄԱ

Քաղաքացիական պայքարի առաջին լիակատար

1. Քաղաքատնտեսության բուրժուական բնորո-
շումները — գիտություն հարստության մասին, գիտու-
թյուն տնտեսության մասին և այլն: Այս բնորոշում-
ների քննադատությունը: «Տնտեսական ձևերի զար-

գաղման գիտութիւն» — բնորոշումը: Այս բնորոշման քննադատութիւնը:

Քաղաքատնտեսութիւնը վորպես ապրանքային կապիտալիստական տնտեսութեան արտադրական հարաբերութիւնների ծագման, զարգացման և անհետացման գիտութիւն:

2. Արտադրութիւն, բաշխում, փոխանակութիւն և սպառում: Նրանց առնչութիւնները: Արտադրութեան, բաշխման, փոխանակութեան և սպառման փոխադամանորումն ու տարբերութիւնը: Արտադրութեան առաջնութիւնը (примат) սպառման նկատմամբ: Սպառման և արտադրութեան նուշնութիւնը հետևյալ չերեք տեսակետներից. 1) արտադրութիւնը սպառում է. սպառումն արտադրութիւն է. 2) Մեկը մյուսի միջոցն է և կատարվում է նրա աշակցութեամբ, առանց արտադրութեան չկա սպառում, առանց սպառման չկա արտադրութիւն. 3) վոչ միայն արտադրութիւնն է անմիջապէս սպառում հանդիսանում, այլև սպառումն է անմիջապէս արտադրութիւն հանդիսանում: Արտադրութիւնը և բաշխումը: Փոխանակութիւնը և շրջանառութիւնը:

3. Տնտեսական կյանքում մասնակցութիւն բերող սուբյեկտների կամքից կամ ցանկութիւնից (և ընդհանրապէս հոգեբանութիւնից) քաղաքատնտեսութեան որենքները դուրս բերելու անկարելիութիւնը: Քաղաքատնտեսութեան սուբյեկտիվ մեթոդի քննադատութիւնը: Որչեկտիվ մեթոդն է միակ գիտական մեթոդը: Որչեկտիվ թեորիայի կապը պրակտիկայի հետ: Մարքսյան քաղաքատնտեսութեան գործոն հեղափոխական որչեկտիվիզմի տարբերութիւնը կապիտալիստական հասարակարգն արդարացնող որչեկտիվիզմից (Ստրուվեյի տիպի):

4. Քաղաքատնտեսութեան մեթոդը վորպէս ընդհանուր գիտելիտիական մեթոդի կիրառումը առանձնահատուկ նյութի վրա: Քաղաքատնտեսութեան կատեգորիաների պատմականութիւնը: Քաղաքատնտեսութեան կատեգորիաների սոցիալական բովանդակութիւնը: Քաղաքատնտեսութեան կատեգորիաների ձևն ու բովանդակութիւնը:

Մենք քննում ենք կապիտալիստական հասարակութիւնը վորպէս հակասութիւնների մի միացութիւն (արտադրողական ուժերի և արտադրական հարաբերութիւնների հակասութիւն, արտադրութեան հասարակական յեղանակի և անհատական յուրացման հակասութիւն, զասակարգերի հակասութիւն): Կապիտալիստական հասարակութեան զարգացման և նրա՝ ներքին հակասութիւնների հետեանքով կորստյան մատնվելու անխուսափելիութեան տեսլանքների բացատրութիւնը: Դինամիկական գիտելիտիական տեսակետի տարբերութիւնը մետաֆիզիկականից, վորը քննում է քաղաքատնտեսութեան կատեգորիաները (կապիտալը, շահութիւն, արժեքը) վորպէս պատմական կատեգորիաներ, վորոնք չուրահատուկ են մարդկութեանը՝ նրա զարգացման բոլոր աստիճանների վրա: Դիալեկտիկական մեթոդի հեղափոխական դերը քաղաքատնտեսութեան զարգացման մեջ:

5. Առանց տնտեսական կոնկրետ մատերիալի նախորդը կուտակման անհնարին և դուրս բերել քաղաքատնտեսութեան որենքները: Տնտեսական չերեք վուշնների բարդութիւնը և քաղաքատնտեսութեան որենքները իմպիրիկ նյութի ընդհանրացման միջո-

ցով միայն դուրս բերելու անկարելիութիւնը (արժեքի որենքը գների ստատիստիկայից միայն դուրս բերելու անկարելիութիւնը և այլն): Կոնկրետ մատերիալի ուսումնասիրութիւնից արտորակցիային անցնելու անհրաժեշտութիւնը: Արտորակցիայի մեթոդը քաղաքատնտեսութեան մեջ: Արտորակցիայի որինակներ. արտորակցիա կապիտալից (քաղաքատնտեսութեան սկզբում), արտորակցիա «յերրորդ անձերից» (զուտ կապիտալիզմ): Արտորակցիայի սահմանները (ապրանքային-կապիտալիստական տնտեսութեան առանձնահատուկ ելութիւնը կազմող ապրանքային ֆետիշիզմից արտորակցիա անելու անթույլատրելիութիւնը): Կառեգորիաների աստիճանական բարդացումն ըստ նրանց զարգացման չափի և հակադարձ շարժում վերացականից դեպի կոնկրետը (պարզ ապրանքային տնտեսութիւնից դեպի կապիտալիստական տնտեսութիւնը, միասնական հովելլալ արժեքից դեպի շահույթի տարբեր տեսակները և այլն): Իր որինաչափութեամբ հասկացված ռեալ կապիտալիստական հասարակութեան բարդ կոնկրետը՝ վորպես քաղաքատնտեսութեան արգասիք:

ՀՀ Ազգային գրադարան



NL0202627

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այստեղ պետք է ավելացվի ևս մի զբաղում «Խորհրդային տնտեսութիւն» — վորպիսին հարկավոր է վերցնել «Пропандист» ժուրնալի 29 թ. № 10-ից: